

# ՏՐԱԿՏԱՆԻ ՄԱՍԻՆ

## ՈՐԱԳԻՐ

ԲԱԿԱՅԻՆ ԲԱՆԱԿԱՆ ԵՒ ԱՌԵՏԲԱՆ

ՈՒԹԵՐՈՐԻ ՏԱՐԻ

ՁՄԻՒԴՆԵՐԱ ՈՒՐԵԱԹ 22 ՕԳՈՍՏՈՍԻ 1847

ԹԻՒ 292

### ԼՁԳԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Լրջալը՝ Լրարաբեանը շարունակ հրատարակու  
թեամբ իւր եօթներորդ տարին լրմնացելով,  
տեղեկութեամբ տարին լրմնացելով 292  
երորդ թաւալն է թէ որ ազգի մը խորհրդածու  
թիւն ընելու ըլլամբ, անշուշտ կը պարտաւորիմք  
բարեկամաց և մեծ զխորհրդածու կարգը զնելու  
եօթ կամ ութ տարեկան կեանք մը հայերէն նա  
խածին լրագրի մը համար, Վանդի յայտնի է որ,  
ամէն նոր բանի մը հիմնադրութիւնը իրիտ դը  
ժուար է և կերպ կերպ արգելքներ պակաս չեն  
ըլլար, որոնցմէ ամէնէն պզտիկը, որնոր մարդս  
բանի տեղ չդնէր, կրնայ երբեմն նոր սկսած  
գործը բոլորովին խախտել, և թէ անոնց գէժ մեծ  
զգուշութիւնը երկար համբերութիւն և յարատե  
ւութիւն ի գործ չդրուի ըստ հարկաւորութեանն,  
Լրագրի հրատարակուելէն գրեթէ ամիս մը  
էտքը խնայանք, որ մերադնեայ երևելիներէն մէկը  
ըսած ըլլայ այս հրատարակութեանը համար, ինչպէ  
սով բան, բայց հայոց գործ է լաւ չտեսնար, Շի  
տակը կարելի է թէ իրաւունք ունէր այսպէս ը  
սելու, և մենք ալ այս կասկածը յառաջմանէ ու  
նենայալ, թէ պէտեւ այս խօսքին վրայ սիրտընուս  
երկիւղը կրկնապատկեցաւ, սակայն թէ՛ ազգին  
պատիւը, և թէ՛ մեր անձին մասնաւոր պատիւը  
պաշտպանելու զիտաւորութեամբ միաբերինս  
զրկեմք ամէն կերպ զհնարէն, և վերջին ճգամը  
և արիւթեամբ աշխատել, որպէսզի ազգիս մէջ  
գրեթէ առած եղած այս խօսքը չտուգուի:

Գործը առջի տարւոյն միջոցը սաստիկ երկնոտե  
թեամբ անցուցինք, երկրորդ և երրորդ տարին  
թէ պէտեւ սիրտընիս քիչ մը հանգչեցաւ, այսու  
ամենայնիւ տեսակ տեսակ դժուարութեանց գէժ  
բաժնաւորութեամբ մարտնչել կը պարտաւորեինք  
միշտ, որպէսզի անոնց ծանրութեանը տակ չնկճի  
մի խեղճ Լրջալը: (և չենք գիտեր յայնժամ  
թէ նախասահմանուած էր, որպէսզի իւր հինգե  
րորդ տարւոյն մէջ ստակալի հրկիղութեամբ փոր  
նուր անոր ազգասիրական յարատեւութիւնը):

Լրարաբեանը Վանդի լրագրին, և Հայրենասիրին  
նշանը որչափ քաջաբերութիւն տուաւ նէ մեզ  
սիրելի, նոյնչափ ալ վշտացանք անոնց կարծատե  
կանցը վրայ, մտածելով թէ կարելի է նոյն ցա  
ւալի բաղդը պահուած ըլլայ Լրջալը՝ Լրարա  
բեան համար ալ: Եւ երբոր տասնի վշտալի մտա  
ւանդութեան մէջ տառապեալ մենք մեզի կը հար  
ցնէինք, ուրեմն պիտի ստուգուի՝ այն երեւելի  
անձին խօսքը, ահա տեսանք որ Վանդի լրագր  
հրատարակուիլ չի կենտրոն, շատ չանցաւ Լրա  
բեանունը լրագրի մըն ալ ի կարկաժա երեւան  
ելու, որուն ետեւէն Լրաբեանը հրատարակուեցաւ  
ի Տիֆլիս, վերջոյն տարի մըն է որ Հայաստան  
պատուական լրագիրը հաստատուեցաւ ի կող  
մանդնուպոլիս, և քանի մը ամիսէ ի վեր Լրաբե  
անունով օրագիր մըն ալ չի նայու մէջ կը հրա  
տարակուի:

Երբեք չորս տարուան մէջ հինգ համագիր եղ  
բայր ստանալով Լրջալը, սկսաւ ինչպէս որ պէտք  
է սիրտ առնել և ուրախանալ, մտածելով թէ,  
եղբայր յեղբորէ օգնեալ ամուր քաղաքի կը մնան  
զիրաւ չկործանիր: Բայց ընդհակառակն եթէ  
Լրջալը բոլորովին անօգնական մնալով, (որնոր  
եթէ կարծեր երբեք) իւր ազատ լըսը գաղտնի

ալ ըլլայ, այսուհետեւ մեծ հոգ չէ, քանզի մեր  
ազգասիրական նպատակին արդէն հասած կը հա  
մարիմք զմեզ ըստ մասին, ինչու որ սիրելի է մեզ  
հաւատալ, թէ առաւօտը մօտ է ծագելու ազգեր  
նուս մէջ, որովհետեւ լրագրաց, հրատարակու  
թիւնը, որ ազգի մը լուսաւորութեան և բարե  
կրթութեան տղիւրն է, ամուր հիմանց վրայ  
հաստատուեցաւ, հատարակութիւնը քիչ կամ  
շատ եռանդ տուցաւ օրագրի կարգաւ, անոր  
հարկաւորութիւնը ծանցաւ, անոր օգտակարութե  
ան փորձը առաւ: Եւ միայն Լրարաբեանի է  
մեզ ուրեմն տեսնել որ աշխատութիւնիս փուճը  
չգնայ, քանզի ահա յաջողեցաւ մեզ մեր սիրելի  
ազգին պատիւը պաշտպանելով հերքել բոլորովին  
այն խօսքը թէ, հայոց գործ է լաւ չտեսնար:

Լրարաբեանը կը համարիմք Լրջալը՝ Լրարաբեան ըն  
թացքին վրայոր երկար տեղեկութիւններ տալու  
այսու առթիւ, քանզի ինչպէս որ անոր եօթը տա  
րեկան հրատարակութեանն յայտնի կը տեսնուի,  
երբեք չուզեցինք զարտուղի սկիզբէն ի վեր հե  
տեւած մեր խաղաղասէր շաւիշէն, և ձեռքերէն  
եկածին չափ հեռու կենալով խաղաղալու առթիւ  
նեղէն, միաբանութիւն, սէր, և ուսումնասիրու  
թիւն քարոզեցինք: Օգու շանալով որ ըլլայ թէ  
մէկու մը անձնական պատուոյն և արժանաւորութ  
եանը դպչեմք, ընդհանուր կերպիւ աճապարե  
ցինք պախարակելու և դատապարտելու զմեզ  
թիւնները, ուր որ տեսանք և լռեցինք, իսկ բա  
րեգործութիւնները և առաքինութիւնները, ո  
րու վրայ որ նշմարեցինք՝ յօժարամտութեամբ գո  
վեցինք: Եւ այս ամենայնիւ կը պարտաւորիմք ան  
կեղծութեամբ խոստովանելու, թէ օտար ազգաց  
առջև մեր հայկազուն ժողովրդաց պատիւը պա  
հելու զիտաւորութեամբ, և հատարակութեան  
նախանձաւորութիւնը շարժելու համար՝ առաւել  
լապէս բարեգործութիւնները հո շահեցինք՝ անի  
չտուակ թող տալով ազգիս մէջ եղած պակասու  
թիւններէն մէկ մասը: Չեմք գիտեր թէ այսպէս  
ընելով աղի, թէ գէշ ծառայութիւն մը ըրինք,  
բայց և այնպէս անհերքելի ճշմարտութիւն մըն  
է թէ նպատակինս առ բարին է, քանզի չիտակը  
գրիչինս իրիտ գժուարաւ կը քալէ, երբոր կը պար  
տաւորիմք մեր ազգակից մէկու մը՝ շարագործու  
թիւնը արձանագրելու:

Վաղարաքիւն և ուրիշ տեսակ լուրերէն միշտ  
ազգագրականները և հարկաւորները ընտրելու հե  
տեւեցանք, և քիչ տողով շատ բան հասկըցնելու  
ջանք ըրինք: Լրարաբեան ընդհանուր քաղաքակա  
նութեան խելամուտ ընելու համար զհատարա  
կութիւնը մասնաւորապէս հոգ տարինք մեծամեծ  
տեղութեանց խորհրդարաններուն մէջ եղած ո  
րոշումները և վեճերը պարզ և գիւրդնաց ոճով մը  
համառօտելու, որպէսզի մեր ընթերցողները  
չզուլեցնեմք երկարորէն գրելով նոյն լուրերուն  
վրայոր, որոնք թէպէտեւ խիստ օգտակար են,  
բայց անոնց հետ տակաւին ընտանեցած չըլլալով  
մեր ազգը, շատերուն հաճելի չեն երևիր:

Վերջապէս օտանեան վեհափառ առաւօտագութ  
կայսեր իւր բոլոր հարստակաց վրայ, և յատկա  
պէս հայոց ազգին վրայ ունեցած մարդասիրական  
խնամքը և հայրական գութը երբեք չգաղտնի  
ցանք հո շահելու, մանաւանդ որ բարեպատեհ  
առթիւներ միշտ ընդ առաջ կը լինեն՝ մեր այս բերկ

րալի պարտաւորութիւնը ի գործ դնելու:

Կհա այս օրինակ եղաւ լրագրիս եօթ տարեկան  
ընթացքը, որուն անսպասարկ պիտի շարունակե  
հետեւելու, քանի որ կենդանի է:

Լրաբեանը այս բոլոր ըսածներէն յայտնի կը ըլլայ,  
թէ ամէն կերպ հնարաւոր ջանքը խղճի մտքը ի  
գործ դրած եմք մինչև ցայսօր՝ մեր ազգագրու  
պաշտօնը արժանապէս վարելու համար, այսու  
ամենայնիւ չեմք կրնար ուրանալ, մանաւանդ թէ  
կրկնութեամբ անկեղծութեամբ խոստովանելու  
լրագրիս բազմութիւ պակասութիւնները և մարդ  
կօրէն սխալները, բայց երկբայութիւն չունինք,  
թէ բարեմիտ հատարակութիւնը վեհանախարար  
թողութիւն չհարկելով մեր ըստ ամենայն մասին  
տխարութեանը պիտի քաջալերէ զմեզ միշտ իւր  
հայրենասիրական յորդարանքը:

Եւ այսու բոլոր անկալութեամբ, և վստահա  
ցեալ յեօթնամիտ տարի ծառայութիւն Լրաբեան  
այ Լրարաբեան կը համարձակիմք աղոյշելու զյարգոյ  
հատարակութիւնը, որպէսզի իւր ազգասիրական  
խնամքը անպակաս ընէ անոր վրայէն, որուն ար  
ժանի ըլլալու համար՝ ամենայն ճգամը պիտի աշ  
խատեմք ձեռնառու ըլլալու մեր ամենասիրելի և  
պատուական ազգին բարոյական և ուսումնասիր  
ական յառաջադիմութեանը, ուսկից հարկաւոր  
ապէս կախուած է ամէն ժողովրդաց և ամէն  
ազգի բարեբաղդութիւնը:

### ՆԵՐՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Կոստանդնուպոլիս, 19 օգոստոսի:

Թէպէտեւ հատարակութեան կրկնութեան, թէ օտ  
մանեան տեղութեան և Յունաստանի մէջ պա  
տահած վեճը բարեկամութեան պիտի լրմնանայ, այ  
սու ամենայնիւ Վեճի կառավարութեան սպա  
րինաւոր ընթացքը և յանդուգն յամառութիւնը  
(ինտո) պարտաւորեցին վերջապէս զՎարձարաց  
Դուռը, որ իւր վեհանախարար երկայնատե  
թիւնը մէկ կողմ ձգելով, բռնի միջոցներ ի գործ  
դնէ իւր իրաւունքը յառաջ տանելու համար:  
Աւստի անցած շաբթու քարձրապատիւ մեծ  
Լապարգոսին նախագահութեամբ յատուկ ժո  
ղով մը ըլլալով՝ որոշուեցաւ որ հաճախողներ  
մէջ եղած բոլոր հեղեկացի հիւսարտանքներն ի  
րենց պաշտօնը վարելու իշխանութիւնը վերցուի,  
և օտմանեան նաւահանգստաց մէջ Յունաստանի  
գրօշակաւ նաւարկութիւնը արգելուի հեղեկա  
կան նաւուց: Եւս որոշումը, որնոր Վեհափառ  
Սուլթանը հաստատեց իւր կարեւորական հաւա  
նութեամբ, օրինաւոր կերպիւ ծանուցուելէն  
ամիս մը ետքը ի գործ պիտի դրուի:

Յաւաքի է յոյժ, որ Յունաստանի խորհրդարա  
նին նախագահ պարոն Վալեթին անարժան և  
անխոհեմ վարմունքով այս աստիճան ծանրացա  
վերջինչեալ վեճը որուն հետեւանքները անտարա  
կայ խիստ վնասակար պիտի ըլլան այս պզտիկ և  
տխար թաղաւորութեանը համար:

Վիճի անուն գաղղիացի պատերազմական չո  
գենաւուն երկրորդ վերաբոյժ մօսիւ կրօ՝ ամսուս



Տին իրիկունը երբոր Վալթայի գլխաւոր ճամբայէն կանցնէր թօփխանէն երթալու համար, յանկարծ երեք ջարագործ անձինք վրան յարձակուելով մահուցափ վիրաւորեցին այս խեղճ պատուաւոր երիտասարդը, որ քանի մը օրէն ետքը մեռաւ: Կառավարութիւնը իսկոյն ամէն կերպ միջոցները ի գործ դրաւ յիշեալ մարդասպանները ձեռք ձգելու համար:

— Թերակողմանի և արեւելեան ընկերութեան շոգենաւը որ ամսուս շին հասաւ ի կոստանդնուպօլիս, Մաթաբանի հրուանդանին (սլուսուս) մօտ Նիզդից երեք եռայարկ նաւերը տեսեր է այսինքն Վիկտոր, Լիւիս և Բօնէյ անուն. որոնք պէտք չէ լինէր կրնաւարկին:

— Վսեմափայլ մօսիւ տը Վիդօֆը, որ այս օրերս վերստին դարձաւ ի կոստանդնուպօլիս Ռուսիոյ դեսպանութեան բարձր պաշտօնը վարելու համար, և վսեմափայլ մօսիւ Տիւսիկօֆը որ փոխանորդութեամբ նոյն պաշտօնը կրկնէր մինչև մօսիւ Վիդօֆին դառնալը, ամսուս 12ին պատիւ ունեցան Նորին Վահագնաւորութեանը ներկայանալու, որ խիստ մարդասիրութեամբ և արժանաւոր մեծարանք ընդունեց զանոնք: Մօսիւ Տիւսիկօֆը մօտ օրերս պիտի մեկնի Ռուսաստան դառնալու համար:

— Փարիզի Պարսից դեսպան վսեմափայլ Միրզա Մէհմէտ Վիլիսիան ներկայ ամսուս 14ին Վիլիէ ըստած գաղղիոյ տէրութեան շոգենաւով ճամբայ ելաւ Վուլոն երթալու. ուսկից Փարիզ պիտի անցնի: Թէպէտեւ այս երեւելի պաշտօնաւորը, նմանապէս իւր խորհրդոյ քարտուղարը բաւականապէս կրնային գաղղիարէն լեզուն, ալ սու ամենայնիւ յիշեալ գետարանը թարգման մըն ալ տարաւ հետը Վասիլիոսի անուամբ, որ քաջ կրնայի գաղղիարէնը, պարսկերէնը և տաճկերէնը:

— (Սոսիսի օգոստոսի 10ին գրուած նամակները կրճանուցանեն թէ Քօլէ-ան գրեթէ կատարելապէս դադարեւ է ի Տիլիսիս. Նմանապէս Վսեմափայլ մէջ ալ շատ տկարացեր է այս աստղը. բայց դժբաղդաբար մեծ կոտորած կրնէ եղբ' ի Բօսթօֆ, ի Մարիանուպօլիս և հարաւային Ռուսիոյ ուրիշ քանի մը քաղաքացի մէջ: Բօսթօֆ 8000 հոգիի չափ բնակիչներէն 2000ը մեռեր են երեք շաբթուան մէջ:

— (Գոստափառ Սուլթանը՝ Տիւրքեան պայծառափայլ ազգատոհմին վրայ ունեցած արքայական իւր բարձր խնամոյց նոր ապրոյոյց մը տալու համար, ամսուս 10ին բարեհաճեցաւ իւր առջևը կանչել տալու զվսեմափայլ Վարապետ և Միհրան չէլէպիները, նմանապէս և զճաղկահասակ Յօմիկի պէյը զորոնք խիստ մարդասիրութեամբ պատուեց և Միհրան չէլէպիին ու Յօմիկի պէյին իրենց պաշտօնին վերաբերեալ մէյլէկ արքայական պատուոյ նշան շնորհեց:

— Թէհրանէն յուլիսի 20 թուով եկած լուրերը կրճանուցանեն. թէ յիշեալ մայրաքաղաքին շրջական բանակեալ զօրաց մէջ մեծ ապստամբութիւն մը պատահեւ է, որոնք իրենց թռչակները կրպակ հանքէն եղեր, որ քանի մը ժամանակէ ի վեր վճարուած չէ: Ապստամբ զօրքերը շատ անկարգութիւններ ըրեր են և Վարսից առաջին ատենակալ իշխան հաճի Միրզա աղան պարտաւորեւ է անոնց հետ բազմութեամբ վարուելու և շատ թոյլտուութիւններ ըրեր է, որոնք մեծ վնաս տուած են իւր իշխանութեանը: Վրէ Վարսից տէրութեան շատ գաւառացի մէջ և մանաւանդ ի Երազ մեծ

խառնութիւններ պատահեւ են. որոնք միշտ կը շարունակուին դրամի պակասութեան պատճառաւ: — Ապաքէն հաւաստի է, թէ ամենապատիւ սրբազան Մատթէոս Պատրիարքին օրով, և անոր ազգասիրական խնամքովը ուսումնասիրութեան եռանդը շատ արժարժեցաւ ազգիս մէջ. ուսկից առաջ եկաւ զանազան ընկերութեանց հիմնադրութիւնը թէ՛ մայրաքաղաքիս մէջ և թէ՛ ուրիշ քաղքերը. որոնցմէ իւրաքանչիւրը մէյլէկ դրպարտան բարեկարգութեանը համար հաստատուած ըլլալով, անոր յառաջողիմութեանը վրայ բարենախանձ եռանդով հոգ կը տանի յարաւելութեամբ:

Վսեմափայլ ուսումնասիրական ընկերութեանց միջոցաւ, ինչպէս որ ամէնքս ալ կրնամք վկայել, քիչ ժամանակին բաւականապէս զարգացաւ ազգը ամէն տեսակ ուսմանց մէջ. անոր համար ընկերութիւնները օր ըստ օրէ բազմացնելու աշխատիլը ազգասիրական և գովելի գործ մըն է:

Վսեմափայլ առաքելութիւնը միշտ կը տեսնեմք Վորին Սրբազանութեանը վրայ. որուն հայրական խրատաւորանքը այս օրերս ալ մէկ նոր միաբանութիւն մը հիմնադրեցաւ ի կոստանդնուպօլիս վանքի մէջ. ազգակցաց մէջ Վրճր-նէսց Նիկիթ-ի-անուամբ: Վսեմափայլ ընկերութիւնը, որուն սրբազան Պատրիարքը հաճեցաւ 500 զուլու նուէր ընելու, արդէն 8000 զուլու չափ դրամագլուխ ունի. որոնք մայրաքաղաքս բնակող վանքի եղբայրները մէջերին ժողովեցին. և ընկերութեան կառավարիչները նոյն դրամով, և այնուհետեւ ազգասէրներէն ժողովելու նպատակը հոգ պիտի տանին Վանի մէջ բարեկարգ դպրատուն մը հաստատելու, վարժապետաց ամանակները հատուցանելու և աղքատ աշակերտաց պիտոյքը ծարելու ըստ հնարաւորութեան:

Վրճր-նէսց Նիկիթ-ի-անուամբ նպատակը ծանուցանելէս ետքը, աւելորդ կը համարեմք յուշածելու մեր ընթերցողացը թէ ազգասիրաց ազգու օժանդակութեանը արժանի է. քանզի բաւական է երեւակայել միանգամ, թէ ինչ խղճութեան մէջ են վանքի հայազգի մանկունքը՝ բարոյական և ուսումնական կրթութենէ շատնցմէ ի վեր բոլորովին զուրկ ըլլալով:

Երջմութ' 20 յուլիս: Նանսարհները խիստ վտանգաւոր են Քիւրտիստանի վերջի դիպուածոց պատճառաւ. քանզի բազմաթիւ փախուտական աւազակներ Պէտէրհան պէյին սուրուէլէն ետքը Վանէն մինչև Նուրմէքը լեռներուն անցքերը բռնելով, անհնար է որ ճանապարհորդները անվնաս կարող ըլլան անցնելու: Մէկ մեծ կարաւան մը որ դէպ ի Պայազիտ կերթար բոլորովին կողոստուեցաւ. այսպիսի դժբաղդ դիպուած մը 1834 էն ի վեր պատահած չունէր ամենեւին: Վրէ Լըզրուլմէն Վաւրէժ գացող շաբաթական սուրհանդակը յիշեալ աւազակաց ձեռքը անցնելով, անոր նամակաց ծրարը բացեր և գիրերուն մէկ մասը պատուեր ու նետեր են:

Քօլէ-ան Կարսէն Չիլդիր անցեր է. և (Սթի մէջ ևս, որ Լըզրուլմէն 18 միլոն հեռու է. քանի մը դիպուած պատահեւ է:

ԱՂԵՔՍԱՆՈՒԹԻԱ, 5 օգոստոսի: Վաղաքական երեւելի դիպուած մը չունիմք ծանուցանելու: Մեծամեծ շինուածոց աշխատութիւնները սովորական գործունէութեամբ կը շարունակուին միշտ: Բարձրապատիւ Մէհմէտ Վիլիսիան, որ Վալ

րում գացած էր, և անկէց Վաֆէր Մաճիար պիտի երթար, սաստիկ տաքերուն պատճառաւ ետ դարձաւ առանց իւր ճանապարհորդութիւնը լրացնելու: Վորին Բարձրութեան առաջնութիւնը խիստ բարեղբ վիճակի մէջ է, և օրը երկու անգամ պորտելու կեղծ, առաւօտուն ձիով և կէսօրէն ետքը կառքով: Վարահիմ փաշան Վուահ կը գտնուի, և բոլոր բամազանի ամիսը այն տեղ պիտի անցնէ կրսէն:

Նշած ամսու 26ին առաւօտուն երկրաշարժութեան սաստիկ ցնցում մը զգացինք արեւելքէն դէպ ի արեւմուտ, որ քանի մը անգամ կրկնեցաւ. Լզիպտոսի մէջ խիստ ծերերը անգամ չեն յիշեր թէ այսպիսի սաստիկ երկրաշարժութիւն մը պատահած ըլլայ. և եթէ քանի մը մանրերկրորդ աւելի դիմացած ըլլար անտարակոյս մեծ վնասներ պիտի հասցնէր: Միևնոյն վայրկէսին մէջ Վահիլէ և Վարի Լզիպտոսն ալ պատահեւ է յիշեալ ցնցումը, բայց աւելի բռնութեամբ. ուստի և դժբաղդութիւններ ալ եղեր են. քանի մը տներ և ուրիշ շինուածքներ փլուեր, և 4-5 հոգի մեռեր են. շատ անձինք ալ վիրաւորուեր են, Ի Շուէզ խիստ թեթեւ եղեր է ցնցումը. սակայն Իշլիսի և Տիմիթի մէջ տներ փլուեր են, բայց առանց մարդու մը կենաց վնաս պատճառելու:

ԹՈՒՆՈՒՁ: Վսեմափայլ կուսակալ բարձրապատիւ Վսեմ փաշան իւր մեծամեծ ծախուց պատճառաւ դրամի կարօտութիւն ունենալով, որոշեւ է որ թղթէ դրամ հանէ. հրաման ընելով որ իւր կառավարութեանը տակ եղած քաղաքացի մէջ դրամի տեղանցի. և եթէ նոյն թղթոց արժէքը ուղղը ըլլայ նէ, կառավարութեան գանձէն պիտի վճարուի հարուրին 4 վար իջեցնելով: Վսեմ փաշան դէմ բողոքելով Թուրքիոյ գաղղիացի վաճառականները, իրենց տէրութեան առաջին ատենակալ իշխան մօսիւ Վիդօֆին աղերսաբար մը գրեւ են, այս թղթէ դրամին վտանգաւոր և վնասակար հետեւանքները յառաջ բերելով, և աղաչելով որ հարկաւոր եղած միջոցները ի գործ դնէ Թուրքիոյ գաղղիացի վաճառականաց օգուտը պաշտպանելու համար:

ԱՐՏԱՐԻՆ ԼՈՒՐԵՐ

ԱՂՂԻԱ. 1 յուլիս, 28 յուլիս: Վրացիներէ փախած ընտրութիւնը մեծ գործունէութեամբ կը շարունակուի Մեծին Վրիդանիոյ միտցեալ երեք թագաւորութեանց մէջ: Վսեմ ժողովը 658 երեւ փոխաններէ կը բաղկանայ, և մինչև ցայսօր 530 հոգի ընտրուած են. որոնցմէ մեծագոյն մասը կառավարութեան կուսակից են. և տարակոյս չիւյ թէ Վորտիհն իւրովին նախագահութեամբ հաստատուած ատենակալ իշխանաց խորհրդարանը ևս առաւել պիտի զօրանայ ընդհանուր ընտրութիւնը կատարելու պէտքը:

Յայտնի է հասարակութեանը թէ, Վսեմափայլ մայրաքաղաքը օրինաւոր ժողովքով արդէն ընտրեց իւր չորս երեսփոխանը. սրանցմէ մէկը պարսի ի խնէլ տը Բօթիլտ երեւելի սեղանաւորն է. որ աղբաւ հրեայ ըլլալուն պատճառաւ, կրօնական լրագիրները շատ դէմ կը դրեն այս ընտրութեանը: Վսեմ ամենայնիւ կառավարութիւնը և անոր հետ բոլոր ազատասէր երեւելի անձինք խիստ գոհ են այս նշանաւոր դիպուածէն. որուն վրայօք Մօրիլի Քօնիլ օրագիրը հետեւեալ կերպիւ կը գրէ: «Վրացի տեսարան մըն է այս՝ իւր տեսակին մէջ, նկատելով որ աշխարհիս ամէնէն գորաւոր



տեղում թիւներէն մէկուն մայրաքաղաքը՝ իւր առաջին ատենակալ իշխանին հետ կըմիաւորի հրապարակաւ համար, թէ կրօնական աղատութիւնը և քաղաքական հաստատութիւնը ճշմարտութիւնը պիտի ըլլան այսուհետեւ»:

Այնպիսի թագուհին և բարձրագոյն տիկին լիւրջ իշխան իւր այրը այսօր (Սպարնի գլխաւորին, որ Վոլոյթ կըլլային մէջն է) պիտի մեկնին ճանապարհորդութիւն մը ընելու համար ի Վոլոյթի և Վոլոյթի ծովեզերեայ քաղաքները:

Այնպիսի գրականոցը հարուստին ծովեզերեայ բարձրացող իւր ստեղծող տակաւ կարծաւորմանաւորման համար, իսկ երեք ամիսէն ետքը վճարելի մուրհակաց կամ փոխանակաբաց համար հարուստին 6 տոկոս պիտի առնէ: Այստեղի մէջ հարուստին 7 կամ 8 տոկոսով հաղիւ թէ գրամ կրնայ գտնուիլ հիմակահիմա և ասոր պատճառը բազմաթիւ սնանկութիւններն են, որ մօտ օրերս պատահեցան: Այսու ամենայնիւ հասարակօրէն խորհուրդ թէ այս գրամական նկար թիւեր շատ ժամանակ զիմանայ, որովհետեւ մօտաւոր հունները ընդհանրապէս առատ կերելին Վոլոյթի մէջ և գործատուները սոցէլ կրքանին ամէն տեղ:

Հաշակաւոր Վանիէ (Ըրոնէլին յուղարկաւորութեան հանդէսը, որուն մարմինը այս օրերս բերին Ղէնուլայէն) ամսուս 24ին մեծ փառաւորութեամբ կատարեցաւ հուպին մայրաքաղաքը: Այն օրը ամէն մարդ իւր գործը ձգելով այս պալի հանդիսին ներկայ գտնուեցաւ. ուրտեղ 500 հազար հոգիէն աւելի բազմութիւն կար: Հետեւալ օրը հուպինի կառավարիչ լորտին նախագահութեամբ ժողով մը եղաւ և որոշուեցաւ որ ստորագրութեան միջոցաւ գրամ ժողովութեամբ արմարան մը կառուցուի ի յիշատակ մեծահաշակ և հայրենասեր հանգուցելոյն: Ստորագրութեան թղթին մէջ լիւր աթերիներէն աւելի պիտի չլրնայ գրուել մէկը. բայց ի (Ըրոնէլի ազգականներէն, որոնք եթէ ուզեն, կրնան աւելի գրամ նուիրելու. և այս կերպիւ կըկարծուի որ 50 հազար լիւր աթերիներ չափ պիտի ժողովուի. այսինքն գրեթէ ծովեզերի միլիոն զուրուշ:

Այնու Տէլհուզին՝ Հնդկաստանի ընդհանուր կառավարանուանեցաւ փոխանակ յորտ Հէրոնիսին. և որը Հէրոնիս թիւներէն, որ կառավարիչ է այժմ Վոլոյթի բարիյուսայ Մատրատի կուսակալ անուանեցաւ փոխանակ թիւներէն մարքէզին:

ԳՆՈՂԻԱ. Փարիզ, 1 օգոստոսի: Թագաւորական հրամանաւ ազգային երեսփոխանաց խորհրդարանը և Փէրերուս խորհրդարանը օրինաւոր կերպիւ բացուեցան:

Կառավարութեան հակառակորդ կողմը օր ըստ օր կըզօրանայ և լրագիրները չեն գաղբիւր ատենակալ իշխանաց գէմ գրելու. բայց մօտիկ Վիգոն ամէն առիթներու մէջ խիստ օրինաւոր պատասխաններ կուտայ իւր հակառակորդներուն:

Կըհաստատեն թէ օգոստոսի 11-ուսաց Կայսերի որդին բարձրագոյն տիկին Կատանդիանոս մեծ դուքսը, որ առայժմ ընտրաւ կըգտնուի, Վաղղիոյ գեպան Պրոյիլի դքսին հետ մտերմաբար տեսութիւն ընելով, խոստացեր է անոր Փարիզ անցնելու մօտ օրերս՝ թագաւորական գերդաստանին այցելութիւն մը ընելու համար:

Վոլոյթի ծովային և զինուորական կառավարութեանց յատուկ հրամաններ խրկուեցան որ մեծ յարգութեամբ ընդունին Պարսից դեսպանը, որ

գաղղիական շոգենաւով մը այս օրերս յիշեալ քաղաքը պիտի հասնի Փարիզ գալու համար:

Բարձրագոյն Վրան վեմափայլ գեպանը անցած ամսու 24ին պատիւ ունեցաւ Վաղղիացոց վեհափառ թագաւորին ներկայանալու:

Վրեւելեան Վաղղիոյ նաւատորմիկին հրամանաւորութիւնը երրորդ ծովայեւ մօտիկ Հէրոնիսին յանձնուեցաւ, փոխանակ երրորդ ծովայեւ մօտիկ թիւերէնին, որ երեք տարիէ ի վեր այս բարձր պաշտօնը կըմարէր:

Դօնեկիլի իշխանը քիչ մը տկարութիւն ունենալով, Նարոյիէն դարձաւ ի Վոլոյթ, ուսկից անմիջապէս մեկնեցաւ Փարիզ երթալու համար:

ՍՊԱՆԻԱ. Վաթարիսիա նահանգին մէջ քաղաքական պատերազմը օրէ օր յառաջ երթալով սուկալի արիւնահեղութիւններ կըլլան անգագար: Տոն Վարլոյի կուսակիցները խիստ զօրաւոր կերելին այս նահանգիս մէջ. որոնց թիւը զարմանալի կերպիւ մը կաճի և կըբազմանայ օր ըստ օրէ:

Այս ապստամբները թէ գրամի կողմանէ և թէ պատերազմական պաշարներու կողմանէ ամենեւին պակասութիւն մը չունին. ուստի հիմակ յայտնի կերելի թէ ասոնց օգնութիւն ընողներ շատ կան նահանգիս մէջ: Ներքին առուտուրը գրեթէ ղեկացաւ. քանզի այսպիսի աղետալ պարագայի մը մէջ ինչ գործ, ինչ առուտուր կրնայ ըլլալ:

Մատրիտի կառավարութեան լրագիրը արքայական հրովարտակ մը կըհրատարակէ յուլիսի 22 թուով, որ կըծանուցանէ թէ հոկտեմբերի 1էն սկսեալ ըստ Ֆրանկաց Վալանիայի ներքին մարտը բոլորովին պիտի վերնայ. այսինքն բոլոր տէրութեանը մէջ, ուրտեղ որ սպարանք տարուի կամ բերուի ամենեւին մաքս պիտի չլծարուի:

Բարբէ անուն լրագիրը կըհաստատէ թէ ներքին գործոց տեսուչը՝ Թագուհիին ամուսնոյն Տոն Ֆրանչէսքոյին հետ խօսակցութիւն մը ընելով պիտի աշխատի փոխան մը տալու արքայական լծակցաց մէջեղած ընտանի տարածայնութեանը: Վաղղիացի օրագիր մը յաջողութիւն բարեմաղթելով այս երեւելի պաշտօնատարին կը յաւելու ըսելու թէ Իզապէլ թագուհիին և Տոն Ֆրանչէսքո թագաւորին տուած օրինակը խիստ վնասի և գաղթակցական է. Եւրոպայի նորահաս լծակցաց համար:

ԲՈՐԹՈՒԿԱԼ: Այս երկրին լուրերը խիստ ցաւալի են. և գաղանկից տէրութիւնները, որոնք քաղաքական պատերազմը վերջացնելու համար ձեռն օգնականութեան կարիւր եցին Տոնա Մարիա թագուհիին, գրեթէ զըջացած կերելին իրենց այս վեհանձնական ընթացքին վրայ. քանզի յիշեալ թագուհին օրէ օր կերկրնցնէ իւր խոստմունքը ի գործ գնելու. այսինքն ատենակալ իշխանները փոխելու, և տէրութեան սահմանադրական օրէնքը նորէն հաստատելու. ուստի գաղանկից երեք տէրութեանց (Վոլոյթի Վաղղիոյ և Վալանիոյ) գեպանները յուլիսի 19ին միաբանութեամբ և օրինաւոր կերպիւ ծանուցին թագուհիին, որ ժամանակ չանցուցած սկսի իւր խոստմունքը կատարելու. որոնց գործադրութեանը համար յիշեալ տէրութիւնները երաշխաւոր եղած են Վորթուկալի ազգին:

ՅՈՒՆԱՍՏԱՆ. Աթէնք 10 օգոստոսի: Խառնալոյզ դիպուածներ պակաս չեն այս տէրութեանը մէջ. ուրտեղ նոր ապստամբութիւն մըն աւպատահեցաւ այս օրերս, որ իսկզբան մեծապէս չփոթեց

զկառավարութիւնը: Կրիզիթի զօրապետը, որ դատաստանական վճիռով մը խալքիս քաղաքին բանտը դրուած էր, ամսուս 1ին գիշերը անկէց փախելով՝ կառավարութեան գէմ ապստամբեցաւ և իւր կուսակիցներով, որոնց թիւը 1000 հոգիէն աւելի է կրտեն, խալքիսէն գրեթէ երեք միլիոն հեռու գեղի մը մէջ ամուր տեղ մը ապաստանեցաւ: Կառավարութիւնը անմիջապէս որքան զօր կրնար նէ խրկեց յիշեալ ապստամբ զօրապետին վրայ. և կըհաստատեն թէ մէջերին ոստիկ պատերազմ մը ըլլալէն ետքը Կրիզիթի վերադարձելով, պարտաւորեց ի մեքձակայ լեռան վրայ պատսպարուելու իւր ընկերներով: Այս կռիւին մէջ 350 հոգի կառավարութեան զօրքէն և գրեթէ նոյն չափ թուով Կրիզիթիին կողմէն սպանուեցին կրտեն:

Յունաստանի այժմեան վիճակը, ինչպէս որ կը տեսնուի ցաւակցութեան արժանի է. բանդի քաղաքական պատերազմը աղետալ կերպիւ մը ի գործ կըդնէ իւր սոսկալի կատաղութիւնները:

## ԳՆԱԼՈՒՆ ԼՈՒՐԵՐ

Չմիւսնիս, 22 օգոստոսի:

Յայտնի է հասարակութեանը թէ չորս յարգի անձինք տարեկան ազգային հոգաբարձու ընտրուած են արդէն՝ քաղաքիս հայոց ժողովոց վերաբերեալ գործերը կառավարելու համար. բայց ժամանակիս պարագաները խիստ դժբաղդ և գործերը ծանր և տաժանաւոր ըլլալով՝ արժան համարուեցաւ, որ 10 հոգի ալ յիշեալ հոգաբարձուաց գործակից և աշխատակից ըլլան: Աւստի անցած շաբթու ազգային ընդհանուր ժողովով և ամենուն համակամ հաճութեամբ հետեւեալ արժանայարգ անձինք ընտրուեցան այս պաշտօնին համար. որոնք են.

Պարոնայր.

Մահտեսի Ստեփան Լիքիզեան.

Հայրապետ Շահումեան.

Մահտեսի Ստեփան Վոնձաեան.

Մահտեսի Մալխաս Փիլիճեան.

Պետրոս Վէմեան.

Մահտեսի Յակոբ Փափաղեան.

Մահտեսի Վրիգոր Կատանդեան.

Ստեփան Շահվէթիլեան.

Յօհաննէս Բարուհակեան.

Յայտնիս հաստատ է, թէ այս նորընտիր հոգաբարձուաց ազգու գործակցութեամբ և բարենախանձ ջանքեր քաղաքիս հայոց ժողովուրդը մէջ առջի բարեկարգութիւնը և միաբանական սերը նորէն պիտի հաստատուին. մանաւանդ որ յիշեալ արժանայարգ ժողովոյն անդամաց գլուխը՝ Լիքիզեանց մեծարգոյ մահտեսի Ստեփան ազուն կըտեսնեմք. որուն ազգային գործոց մէջ ունեցած բազմամեայ փորձը, մոտոց ու շինութիւնը և խոհականութիւնը յայտնի է ամենուն:

Վերջապէս երկրայնութիւն չունիմք. թէ մեր բարեխիտ և յարգոյ հասարակութիւնը, որ իւր նախկին եղբայրսիրական ընթացքով և պարկէշտու հնազանդ վարմունքով բարի պիտի եղած էր ուրիշ քաղաքները գտնուած հայազգի ժողովուրդը պիտի աշխատի հոգւով չափ նոյն գովելի առաքի նու թիւները ձեռք չձգելով իւր յարգը և պատիւը անարատ պահելու:

Եւ քաջայայտ էմք թէ այսպիսի աստուածահաճոյ ընթացք մը երկնային ողորմութիւնը և յաջող



դու թիւնն աւարտի բերէ մեր առեւտրական գործոց վրայ . որոնք բաւական ժամանակէ ՚ի վեր սատարիկ ձախորդութեան և դժբաղդութեան մէջ գտնուելով՝ բազմաթիւ հայոց դերդաստաններ խղճութեան և կարօտութեան մէջ ձգեցին :

Մեր նախնիքաց թուով ծանուցանելով, թէ Տիւղեան վեմափայլ կարասիւտ չէլէ պին խնամաւ կալ կարգեցաւ Միհրան չէլէ պին վերաբերեալ գործոցը, մուսայանք յիշատակելու թէ վեմափայլ Տիւղեան Պօղոս չէլէ պին ալ բարձրագոյն հրատանաւ վերադարձու անուանեցաւ Յովնիկ պէյին յատկացեալ պաշտօնին . որ Ուշայի հոմայիւնի և Էֆրատի հոմայիւնի վերաբերեալ գործքերն են : Իսկ Միհրան չէլէ պին՝ ծոպայիւնի պաշտօնը յանձնուած է :

Այս բարձր պաշտօններուն յաջող և բարեկարգ կառավարութեանը համար, որ ազգիս պարծանք մըն է, Իզմիրի հայոց հասարակութիւնը ազգասիրական պարտք մը կը համարի իրեն՝ իր սրտին մտերիմ բարեմաղթութիւնները ընդգրկաւ միջոցաւ մատուցանելու յիշեալ իշխանազուն ազնիւ պայազատաց, ազաւելով որ բարեհաճին ընդունելու իրեն տկար ապացոյց մը զմիւսնացոյց ակնածական խորին յարգանքով :

Այսպէս է թէ հոգեւոր առաջնորդաց և երէւելի անձանց ուսումնասիրական խրատները և յորդորանքը մեծ ազդեցութիւն կունենան հասարակութեանը վրայ, և շատ անգամ յաջողութեամբ կը պատկուին : Այս ըստմունս բարեմաղթութիւն օրինակներ ունիմք, որոնցմէ մէկն ալ թէ քիւրտաղի հայոց ժողովուրդն է . որուն բարեկարգ առաջնորդ թաղէոս շնորհափայլ ծայրագոյն վարդապետը, (որ միանգամայն որբազան Պատրիարքին փոխանորդն է) միշտ անպակաս ընելով իրեն յանձնուած բանական հօտին վրային իւր հայրական խրատները և ուսումնասիրական քաջաբերութիւնները, անոնց պատուը քիչ ժամանակին մէջ ահա երևան ելաւ : Քանի յիշեալ քաղքին յարգոյ հասարակութիւնը մօտ օրերս ընկերութիւն մը հաստատեցին մէջերին, որ իրենց դպրատան բարեկարգութեանը և յառաջագիտութեանը վրայօք ամէն կերպիւ հոգ պիտի տան :

Այս ազգագուտ ընկերութեան հիմնադրութեանը համար կը պարտաւորիմք նաև շնորհակալ ըլլալու թէքիւրտաղի սուրբ թաղաւոր և կեղեցւոյն հոգաբարձու (միւթէվէլի) Արիւլէան մեծարգոյ Ստեփան աղային, որուն բարեգութեան քը և ազգասիրական եռանդը գոյութեան արժանի են, որովհետև խիստ յաջող փոխձան մը ունեցան . ինչպէս որ յայտնի կըլլայ խոհեմազարդ տէր թաղէոս ծայրագոյն վարդապետին ընդունած նամակէն, որնոր թէքիւրտաղէն իւր փոխանորդ Վրդօր վարդապետը գրած է : Յիշեալ նամակին հրատարակութիւնը պարտաւորեցանք ընդգրկալ յաջողութեան թողտալու՝ այս շաբթուան նիւթոց առատութեանը պատճառաւ :

Յանկալի է մեղձանուցանելու հասարակութեանը, թէ Արմաշու սուրբ Աստուածածնի փառքին մէջ եղած դպրոցը, ինչպէս որ կը լսեմք, խիստ բարեկարգութեամբ կը դարձանայ : Ամանապէս Արմաշ գիւղը՝ Տառեան վեմափայլ ազգասէր պայազատաց արդեամբը հաստատուած դպրատունը օր ըստ օրէ յառաջագիտ կը ծաղկի յիշեալ Ամիրայից առատագութիւնով : Մօտ օրերս այս դպրատան աշակերտաց հարցաքննութեան հանգէսը կատարուելով, ներկայ գտնուողները

շատ գոհ եղեր են անոնց քիչ ժամանակին մէջ ըրած ամէն կերպ յառաջագիտութենէն :

Այրաւի օրը Իզմիրի սուրբ Ստեփաննոս եկեղեցւոյն մէջ պատրիարքական օրհնածիր կոնգակ մը կարգացուեցաւ, որ կը ծանուցանէ հաւատացեալ ժողովուրդը թէ Ստեփաննոս պօղոս մէջ իշխանութեան հետեւ օր մեր ազգակիցներէն 25 հոգի վերստին դարձեր են ՚ի ծոց Հայաստանեայց կաթողիկէ ուղղափառ սուրբ եկեղեցւոյ :

Այս օրհնութեան կոնգակը մեծ միակթարութիւն պատճառեց քաղաքիս հասարակութեանը . որուն իւր հայրենի ուղղափառ հաւատքին վրայ ունեցած անդրդուելի ջերմեռանդութիւնը ՚ի վարդաց անտի քաջայայտ է ամէնուրեք :

Այնչա՞ծ շաբթու անձնապահութեան երեք դիպումը պատահեցան : Մէկը՝ գաղղիացի բժիշկ մըն էր 55 տարեկան, որ ժամանակէ մը ՚ի վեր կուրող չըլլալով իւր գերգաստանին հարկաւոր ծախքը ծարելու վերջին կարօտութեան մէջ մնացեր է, և դժբաղդաբար Վերին Արախանստանութենէն յայր կորելով ինքզինքը թունաւորեց և քանի մը ժամու մէջ մեռաւ : Երկրորդը՝ Պարսկիսի գիւղի բնակիչ խաւարցի ատաղձագործ (տիւրկեր) մըն էր, նմանապէս 50-55 տարեկան . որուն յուսահատութեան պատճառը կերելի թէ իւր երկարատեւ հիւանդութիւնն էր . որով շատոնցմէ ՚ի վեր ախտացեալ ըլլալով, և չկրնալով համբերել իւր ցաւոցը, ինքզինքը սպաննեց ատճանակը (փիշթօֆ) գէտ ՚ի գլուխը պարսկելով : Երրորդ անձնապահը գերմանացի մըն էր, որ իւր կնոջ հետ ստառիկ կուր ընելէն ետքը, գնաց ինքզինքը ծովը նետեց ու խեղդուեցաւ . և յիրաւի Աստուծոյ յատուկ ողորմութիւնը պիտի համարի, որ այդ պիտի յուսահատական գործ մը չգործէ մէկը, երբոր դժբաղդաբար գէշ կնոջ մը ինկած է :

Քիստ կղզին (Սաբըղատար) կը գրեն, թէ Արիւլթի սարսափ զօրապետը, (որուն վրայօք յիշատակութիւն եղած է ներկայ թուոյս Յուստոսնի յոգուածին մէջ) հերքեական նաւով մը իւր հայրենիքէն փախեր ու յիշեալ կղզին հասեր է, իւր կուսակիցներէն 60 հոգի հետը բերելով : Օրապետ Արիւլթիին, որուն աջ բազուկը պատերազմին մէջ կորսու էր, թնդանթի մը հարուածքով, բժիշկ մը խնդրեր է ՚ի Վիոս, որ զինքը խնամէ, և կը հաստատեն թէ իւր աւուրդութիւնը բարեւոր վիճակի մէջ է :

Հաւաստի լուրերէ կիմանալով թէ Սոսամի ծովի զերբը մինչև Վասթէլ Բոսօ ծովասպանակի նաւակներ անպակաս են :

Միտիլինէն կը ծանուցանեն թէ օգոստոսի 12 ին կէս գիշերը երեք ժամ անցած երկրաշարժութեան սատարիկ ցնցում մը զգացեր են . որ քիչ մը ետքը կը կնուեր է բոյց թեթեւ ցնցումով մը :

Բարձրապատիւ Վրէտերիք իշխանը, որ Հոլանտացի թագաւորին եղբայրն է, Բեդրուպուրէն գալով Վերին հասեր է : Կը հաստատեն թէ Հոլանտայի թագաւորը միտք ունենալով մօտ օրերս երկար ճանապարհորդութիւն մը ընելու Արևելքի կողմը, յիշեալ արքայազուն իշխանին պիտի յանձնէ իւր թագաւորութեան առժամանակեայ փոխանորդութիւնը :

Այնչա՞ծ շաբթու հայու տուն մը գողմուս, բայց տանուտէրը արթուն ըլլալով բան մը չկըցաւ վերցնելու : Այն շաբթու ֆրանկաց թաղը տան մը մէջ ալ գողեր մտան, և 2500 զուրուշի չափ գրամ վերցուցին . այլ բարեբաղդաբար

կառավարութեան ձեռքը անցնելով յիշեալ քաղաքները, գողցած գրամներն ետ դարձուցին :

Վուրիսօ մայրաքաղաքին թագաւորական ձեմարանին երկրաշարժութեան դատաւոր արժանաւարդ պարսն Ղ . Յ . Պարուֆիլը ճանապարհորդութեամբ Իզմիր գտնուելով այս օրերս, երէկ այցելութեան եկաւ սուրբ Մեսրոպեան հայոց ուսումնարանին, որուն կարգադրութեանը և զոնազան ուսմանց դատաւորութեանը վրայօք մանրամասն տեղեկութիւններ ստացաւ :

Ատապայէն մօտ օրերս հայազգի յարգի ճանապարհորդ մը գալով Իզմիր, գտնութեամբ պատմեց մեզ յիշեալ գիւղաքաղաքին հայոց դպրատան բարեկարգութիւնը և անոր մէջ գտնուած 40ի չափ աշակերտաց ըստ կարի յառաջագիտութիւնը . ուստի ուրախութեամբ կը թուութեամբ ձեռնադրու հասարակութեանը այս ազգագուտ միակթարական ըւրբ . որ զոստապայցոց գովելի ուսումնասիրութիւնը յայտնեցին ՚ի զօտ, իրենց պատուելի և ազնուազարմ վարժապետին բարենտխան՝ ու անդադար ջանիցը ապացոյց մըն է :

ԱՌԵՒՏԻԿԱԸՆ ԼՈՒՐԵՐ

Չմիւսնիս, 22 օգոստոսի :

Երբ փոփոխութիւն մը չեղաւ քաղաքիս սուրական վիճակին, որ միւսնայն հանգարտութեան մէջէ գրեթէ ամէն տեսակ ապրանքայ համար ընդհանրապէս : Այնչա՞ծ շաբթու 2 կողմաֆրոն ծախուեցաւ 110 զուրուշի չէքին . բայց այս գինով ուրիշ առնող չկայ այսօր : Երբ հոս նձի ձէհընեկաւ, որուն հօտային համար 24 դուրուշ գին տուին : Փարսմուտը, տորանը, տրմոթը, և ոչնորի բուրգը մեծ հանգարտութեան մէջ և զժաւարակաւ են : Այս վերջի տեսակէն Աստուրի ապրանք ծախուեցաւ այս օրերս 155 զուրուշի խաւթարը : Զոր թուզին խաւթարը 60էն մինչև 125 զուրուշի ծախուեցաւ երէկ ըստ տեսակին : Ամէն օր 450-500 բեռ թուզիւրգայ և մինչև ցայսօր գրեթէ 4000 բեռ տարանք եկած է . որոնք 50էն սկսեալ մինչև 130 դուրուշի ծախուեցան . և քանի մը բեռ միայն խիստ պատուական տեսակէն 150-160 զուրուշի գնոյ առին : Այս տարուան թուզին տեսակը այնքան աղէկ չէ և հոսն ալ նուազ կերելի :

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ

Այս լրագիրը երկու շաբթու անգամ մը՝ որ արժ օրը կը հրատարակուի : Տարեկան գինը 120 զուրուշի կանխիկ վճարելով որ կուզէ, կրնայ ստորագրուիլ . Իզմիր՝ Արշալուսոյ Արաքս տան գրատունը . իսկ ուրիշ քաղաքաց համար՝ ահա կընշուակեմք լրագրիս յարգի գործակալաց անուամբը, որք են :

Կառանդաւորութիւն՝ Պարսկաքաղաքի գրագիր Պարսկեան պատուելի պարսն Աւետիս :

Պրուսա՝ Բարսեղեան Մարթէոս և Գրիգոր աղայ :

Աւերսոնգրիս՝ Եւսուֆեան Գեորգ աղայ :

Գահրէի՝ Եղիազարեան Մ . Աւերսոն և Մ . Յակոբ աղայ :

Զորթի՝ Բուրիս և Միտիլիս Նահանգաց Ամիրից հիւպատոս Յակոբ աղայ Ս . Սաբրանեան :

Թրեկոս՝ Գրիգոր աղայ Արեւելան :

Կարին՝ Յովսէփեան աղայ Յակոբեանեան :

Բերկա՝ արժանապատիւ տէր Գեորգ աւագ քահանայ :

Պարսկա՝ Անդրէյ աւագին թորգման աղայ Խալիկ Միտիլեան :

Բեդրուպուրի՝ Դաւիթեան Սիմեոն աղայ Ալիֆան :

Տիֆլիս՝ Կարեկեան պատուելի Յակոբ վարժապետ :

Դաւիթ՝ Երմայանեան Վարդանեան աղայ Դաւիթ :

Կարիսիս՝ պարսն Փ . Ա . Գեորգեան :

Մատրոս՝ պարսն Մամ և ընկերք :

Միտիլիս՝ պարսն Սաբրան և Ստեփաննոս :

Հրատարակիչ և տէր լրագրիս :

Դուրա Գ . Պաշապալեան :